ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

24 փետրվարի 2011թ. թիվ 69

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.24 կետով՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

Լոռու մարզում 2011թ. գարնանային զորակոչը կազմակերպելու և անցկացնելու նպատակով՝

1. Ստեղծել տարածաշրջանային զինվորական կոմիսարիատների տեղական զորակոչային հանձնաժողովներ և հաստատել կազմերը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի աշխատանքներն սկսել 2011թ. մարտի 10-ից և ավարտել 2011թ. հունիսի 30-ին:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

1) Տարածաշրջանային զինվորական կոմիսարիատների հայտերի համաձայն՝ տեղական զորակոչային հանձնաժողովները համալրել մարզային ենթակայության առողջապահական ընկերությունների համապատասխան մասնագետներով:

2) Կազմակերպել զորակոչիկների բժշկական փորձաքննության, բժշկական օգնության և սպասարկման գործընթացը:

4. Մարզի համայնքների ղեկավարներին՝

Տարածաշրջանային զինվորական կոմիսարիատներին աջակցել զորակոչիկներին ծանուցագրերի հանձնման և նրանց զինկոմիսարիատներ ներկայանալու գործընթացում:

5. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետին՝

Ձեռնարկել միջոցառումներ զինվորական ծառայությունից խուսափող զորակոչիկների հայտնաբերման և զորակոչային տեղամասերում հասարակական կարգի պահպանության ուղղությամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՔՈՉԱՐՅԱՆ

2011թ. փետրվարի 24
ք.Վանաձոր